ԽՈՍՔ ՄԸ ԾՆՆԴՅԱՆ ԱՌԹԻՎ

«Իրրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ»:

(Մատթ. Բ 10)

Նորեն կշողա քրիստոնեական փրկության պայծառ լույսը:

Մեր հոգիները պետք ունին անոր, փարատելու համար մեր գոյության մութն ու մահվան սպառնալիքը: Իրավ է որ համաստեղութեանե փրթած աստղ մը չի՛ ծագիր այսօր՝ անարև այրի մը շուրջը փալփլելու և ցույց տալու համար մեզի Մանուկ Հիսուսի չքնաղ իւանձարուրը, բայց Գիտության աստղեն շա՜տ ավելի կրնա ջինջ ու անբիծ ըլլալ մեր Գիտակցության փոքրիկ ճրագը, եթե ան նշուլե մեր ներքին տաճարին մեջ: Օրվան հրաշալի աստղը, որ իր նմաններուն մեջ երջանիկ բախտն ունեցավ պատմական հորիզոն մը լուսավորելու մեր երկրագունդին վրա, մեզի իբրև նշանակ կծառայե այսօր, արտահայտելու համար մեր համոզումը՝ թե Հիսուս ալ, մարդկության ծոցին և իր եղբայրներուն մեջ, այն մեկհատիկ աստղն եղավ՝ որ սա քարայր-աշխարհին վերև հավերժացնելով իր ճառագայթը՝ հավատարապես ցոլացուց իր լույսը, ամեն ժամանակի գիտուն մոգերու և տգետ հովիվներու իղձին ու նայվածքին.

Ի՞նչ կըլլար հետևանքը, եթե հավատացյալներուն չծագեր վերստին այդ երկնավոր փառքը՝ Ավետարանի խորհրդավոր բարձրութեանեն.—սահմանափակ կյանքի մը տխուր իրականություններեն կմթագներ մեր ճակատագիրը, անհատնում վիշտերու տառապանքեն կդառնանար մեր հույսերուն քաղցրությունը, Նյութին բռնության ու կապանքներուն գերի կիյնար մեր ազատ շունչը, անհավատ մտածություններու հաճախանքեն կքայքայվեին մեր կենսական ուժերը. մեկ խոսքով՝ կխափանվեին այն գերագույն ներշնչումները որոնցմով սրբագործեց ու խանդավառեց Հիսուս մեր բովանդակ սիրտն ու սերը:

Մեր Փրկիչն է որ կայցելե այսօր մեզի: Եթե Ան մերժվի կարծեցյալ իրեններեն՝ ինչպես երբեմն, ո՜րքան բազմաթիվ են սակայն անոնք՝ որ բուն իրեններն ըլլալով **մեծ ուրախությամբ** կողջունեն զԻնքը, ավետավոր հրեշտակին հրավերովը:

Մենք կհավատանք Անոր: Վառե՛նք ուրեմն մեր հավատքը ջահավորող փոքրիկ ճրագները մեր հոգեկան սրբավայրին մեջ, և ահա անոնցմով պիտի կրնանք ստեղծագործել առաջին օրվան հրաշալի աստղը, ու Քրիստոս պիտի ծնի՜ մեր մեջ:

ԵՂԻՇԵ ԱՐՔ. ԴՈՒՐՅԱՆ

(«Սիոն», Երուսաղեմ, 1929 թ., թիվ 1, էջ 2)